ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2026թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի «Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում» ծրագրով ձեռք բերված 17,799,600 (տասնյոթ միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար վեց հարյուր դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թվով 2 (երկու) վերելակները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի «Արաբկիր» առողջության կենտրոն» ՓԲ ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի «Արաբկիր» առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին 2025 թվականին կնքված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-25/4 պայմանագրով Երևանի «Արաբկիր» առողջության կենտրոն ՓԲ ընկերության թվով 2 վերելակները փոխարինվել են նորով: Նոր վերելակները ձեռք են բերվել 17,799,600 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր քսան հազար դրամ) ՀՀ դրամ արժեքով և ներկայումս վերելակների փաստացի շահագործումը և պահպանումը իրականացվում է Երևանի «Արաբկիր» առողջության կենտրոն ՓԲ ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ